ևր, հասնել այն բանին, որպեսզի «Հայ ժողովրդի պատմության» ռուսերեն հրատարակությունում առավել հստակությամբ ու գիտականորեն մեկնաբանվեն հայ ժողովրդի ձևավորման պրոցեսին առնչվող հարցերը, նախապես լայն քննարկման դնելով դրանք գիտական մամուլում:

2. Նախագահությունը անհրաժեշտ է համարում շարունակել գիտական բանավեճերը նշված պրոբլեմների շուրջ և միաժամանակ մամուլի օրգանների և հեռուստատեսության ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ գիտականորեն չհիմնավորված հոդվածների և հաղորդումների տարածումը ավելորդ անգամ կրքերի բորբոքում է առաջացնում և ապակողմնորոշում է ընթերցող լայն հասարակայնությանը:

3. Հասարակագիտական բաժանմունքների և ինստիտուտների ղեկավարների ուշադրությունը հրավիրել հայ ժողովրդի պատմության հնագույն ժամանակաշրջանի հարցերով զբաղվող գիտական բարձրորակ կադրերի պատրաստման անհրաժեշտության վրա»:

## ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

*Հունիսի 23-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված կուսակցական ու պետական ականավոր գործիչ, անվանի պատմաբան, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակին։ Բացման խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ու տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։ Նա մանրամասնորեն նշեց, որ Աշոտ Հովհաննիսյանը սովորական գործիչ կամ գիտնական չէր։ Նա ապրել է բուռն, բազմաբովանդակ և մեծ կյանքով։ Անդրկովկասի հեղափոխական շարժումների մասնակից, կուսակցական ու պետական ականավոր գործիչ, խորաթափանց գիտնական՝ ահա Աշոտ Հովհաննիսյանի կերպարը ամենաընդհանուր գծերով։*

*1918 թ. նա գործել է Բաքվի կոմունայում՝ լինելով Ս. Շահումյանի մերձավոր զինակիցներից մեկը. ապա անցնելով Մոսկվա աշխատել է ազգությունների ժողովրդական կոմիսարիատի հայկական գործերի կոմիսարիատում՝ հայոց մեծ բանաստեղծ Վահան Տերյանի ընկերակցությամբ։ Միաժամանակ դասախոսել է Լազարյան ճեմարանում։ Գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղվող քաղաքացիական կռիվներին։*

*Աշ. Հովհաննիսյանը 1922—1927 թթ. արգասավոր գործունեություն ծավալեց իբրև Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության լուսավորության ժողովրդական կոմիսար, ապա՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար։*

*1928—1937 թթ. նա Մոսկվայում զբաղվում էր գիտական ու մանկավարժական աշխատանքով։ Բայց նրան ևս վիճակված էր ըմպել անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի անարդարության ու բռնության դառը բաժակը։ Վերադառնալով մեկուսացումից նա ամբողջովին նվիրվեց գիտությանը։ Գիտնականի կրակը նրա մեջ երբեք չէր մարել սկսած 1913 թ., երբ Մյունխենում լույս տեսավ նրա առաջին գիտական ուսումնասիրությունը՝ նվիրված Իսրայել Օրուն ու հայերի ռուսական կողմնորոշմանը։*

*Աշոտ Հովհաննիսյան պատմաբան-գիտնականի բնորոշ նվիրական բնագավառը հայ ժողովրդի ազատագրական պայքարն էր իր ժողովրդական, դեմոկրատական գաղափարախոսությամբ՝ միջին դարերից սկսած մինչև XX դարը։ XIX դարի համար այդպիսի խորհուրդ ունեցավ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» 1955—1956 թթ. լույս տեսած երկհատոր կապիտալ աշխատությունը, որի հեղինակը, ըստ էության, դարձավ նալբանդյանագիտության հիմնադիրը։ 1957—1959 թթ. հրապարակվեց Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» դարձյալ երկհատոր աշխատությունը, որով բացահայտվեցին հայ ազատագրական մտքի զարգացումը, ընթացքն ու ելևէջները երկար դարերի տևողությամբ։*

*Աշոտ Հովհաննիսյանն անցել է հեղափոխական, կուսակցական և գիտական ստեղծագործական աշխատանքի մեծ, բարդ, բայց արգասավոր ուղի։ Նա մեծ էր իբրև հասարակական գործիչ, քաղաքացի և գիտնական։ Նա միաժամանակ պարզ էր իր բարդ խառնվածքի մեջ, անմիջական, ազնիվ, ճշմարտացի ու բարի։*

*Աշոտ Հովհաննիսյանի վաստակը արժանի է խորին հարգանքի և երախտագիտության։*

*«Ա. Գ. Հովհաննիսյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բ. Բարխուդարյանը։ Նա կանգ առավ Աշոտ Հովհաննիսյանի կյանքի ու կենսագրության այն պահերի վրա, երբ ձևավորվեց*

ապագա կուսակցականը, հասարակական գործիչն ու գիտնականը։ Տարբեր ժամանակներում գրված նրա շոթանասունից ավելի ուսումնասիրությունների առանցքը կազմել են հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության, ազգային ու սոցիալական ազատագրության հարցերը։

Զեկուցողը նշեց, որ Աշոտ Հովհաննիսյանի գիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու փուլի։ Առաջինը 1920—1930-ական թթ. են. այս տարիներին գրված իր աշխատություններում Հովհաննիսյանը թույլ է տվել մի շարք սխալներ, քանի որ տուրք է տվել գռեհիկ սոցիոլոգիզմին։ Մշտապես գտնվելով գիտական-քաղաքական պայքարի առաջին շարքերում նա, բնականաբար, չէր կարող ամբողջովին մերժել ժամանակի գաղափարախոսության մեջ տիրապետող մտայնությունը։ Երկրորդ փուլում, որ սկսվեց 1950-ական թթ., Հովհաննիսյանը իր գիտական աշխատանքներով նոր աստիճանի բարձրացրեց հայ պատմագիտական ու հրապարակախոսական մտքի ուսումնասիրությունը։ Ինչպես «Դրվագները», այնպես էլ Նալբանդյանին նվիրված ուսումնասիրությունները աչքի են ընկնում պատմական երևույթների լայն ընդգրկմամբ, պրոբլեմի հետազոտման խորությամբ, գիտական հարցադրումների թարմությամբ, անցյալի իրողությունները իրենց զարգացման դիալեկտիկայի մեջ քննարկելու հեղինակի անուրանալի կարողությամբ։ Առանց վարանելու կարելի է հավաստել, որ փաստական-աղբյուրագիտական վիթխարի նյութով, պատմագիտական լայն պաստառի վրա ստեղծված այս երկու աշխատությունները Աշոտ Հովհաննիսյանի հաստատուն տեղն ապահովեցին հայագիտության մեծ երախտավորների շարքում։ Վերջում զեկուցողը շեշտեց բազմավաստակ գիտնականի առայժմ անտիպ մնացած աշխատությունների, հատկապես XIX դարի վերջին քառորդի հայ հասարակական հոսանքների և ազգային քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմությանը նվիրված մենագրության հրատարակության անհրաժեշտությունը։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Մ. Ջրբաշյանը հանդես եկավ «Ա. Գ. Հովհաննիսյանը և Նալբանդյանագիտության ժամանակակից հարցերը» թեմայով։ Զնայած Երվանդ Շահազիզի, Արամ Ինճիկյանի մեծ ներդրմանը,— ասաց նա,— Աշոտ Հովհաննիսյանին է պատկանում Նալբանդյանագիտության ամենամեծ երախտավորի դափնին, որը նա նվաճել է իր կապիտալ գործերով։ Հատկապես նշվեց, որ հավաքած վիթխարի փաստական նյութն ու սկզբունքային հարցադրումները Աշոտ Հովհաննիսյանին մշտապես մասնակից են դարձնում Նալբանդյանագիտության նորագույն որոնումներին։ Այն հանգամանքը, որ Նալբանդյանագիտությունը շարունակում է զարգանալ և հասարակական լայն հետաքրքրություն հարուցել, խոշոր չափով պետք է համարել Աշոտ Հովհաննիսյանի ծառայությունը, որը մեր գիտության այդ ճյուղը դրեց փաստական և մեթոդաբանական ամուր հիմքերի վրա։

«Ա. Գ. Հովհաննիսյանը հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության հետազոտող» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Հ. Մխիթարյանը։

Ականավոր գիտնականի մասին իր հուշերով հանդես եկավ գրող Սերո Խանզադյանը։

**Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**